



ԿԱԹՈՂՒԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿՈՅ

ԱՆԹԻՒԽԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ.....

Անթիլիաս,

Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Խ Օ Ս Ք

“ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԸՆԴԱՌԱՋ”

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

(4-6 Հոկտեմբեր 2012)

Հայրապետական օրհնութեամբ եւ ֆրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն: Ջերմօրէն կ'ողջունենք Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին լրագրողներու համահայկական համաժողով մը կազմակերպելու Սփիւռքի Նախարարուհի Տիկին Հրանոյշ Յակոբեանի գնահատելի նախաձեռնութիւնը: Արդարեւ, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի նշման ծիրէն ներս անհրաժեշտ է որ լրագրութիւնը առանցֆային տեղ ու դեր ունենայ: Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ տեղեկատուական, յարաբերական ու լրագրային ելեկտրոնային միջոցներու անհամեմատ զարգացումը վնասոք դեր կը կատարէ ընկերութեան կեանքի ֆաղափական, տնտեսական, մշակութային եւ այլ բնագաւառներէն ներս:

Արդ, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով առաւելագոյն չափով ու ճիշդ կերպով հարկ է օգտագործել լրատուական բոլոր միջոցները՝ յստակ լեզուով, ամուր կեցուածքով ու ծրագրուած մօտեցումով աշխարհին փոխանցելու ցարդ անպատիժ մնացած հայկական ցեղասպանութեան հետեւանքները ու մանաւանդ մեր ժողովուրդին անտեղիտալի պահանջատիրութիւնը: Տեղեկատուական ազդու միջոցներու ճիշդ օգտագործման առընթեր անհրաժեշտ է մանաւանդ գիտնալ **ինչ** փոխանցել եւ **ինչպէս** փոխանցել:

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի համազգային յանձնախումբի երկրորդ նիստին, շուրջ երկու շաբաթներ առաջ, այս մասին անդրադառնալով, միջազգային շրջանակներէն ներս Մեր ունեցած փորձառութեան լոյսին տակ, շեշտեցինք թէ՛ 100-ամեակի նշման մեր ծրագրումը ու գործունէութիւնը պէտք է իրենց ուղղութիւնը ստանան հետեւեալ երեք բառերով արտայայտուող մտածումներէ, ուղղութիւններէ ու մօտեցումներէ. այդ բառերն են՝ **ՅԻՇՆԵԼ, ՅԻՇՆՑՆԵԼ** ու **ՊԱՀԱՆՋԵԼ**: Պարզեմք Մեր միտքը.-

ա) Մեր առաջին հասցէն պէտք է ըլլայ **ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ**, յատկապէս՝ մեր երիտասարդութիւնը: Ոչ միայն ցեղասպանութիւնը ապրած սերունդը անհետացած է, այլ նաեւ անոր յաջորդող սերունդին տերեւաթափն ալ սկսած է: Մեր ժողովուրդին հաւաքական յիշողութիւնը խիստ կարիք ունի վերաթարմացման: Արդ, անհրաժեշտ է մեր երիտասարդութեան մտածողութեան ու կեանքին մէջ